«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՄՈՒԼՅԱԺՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԷԱՃԱՊՁԲ-2021/16-1-ԵՊԲՀ-1

ք. Երևան «___» _____ 20 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Բաբկեն Թադևոսյանի, որը գործում է «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 9912300 (ինը միլիոն ինն հարյուր տասներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[2]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնո

ւմների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___ 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[3] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.2 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	ՎԱՃԱՌՈՂ
<<Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	**«Կոնցեռն-էներգոմաշ»ՓԲԸ**
Հիմնադրամ	**Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Բանկ՝ «Էյչ Էս Բի ՍԻ բանկ Հայաստան»ՓԲԸ**
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Հ/Հ 217002182558001**
հ/հ 11500166513800	**ՀՎՀՀ 01210095**
ՀՎՀՀ 01503448	
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Տնօրեն՝ Բ. Թադևոսյան**
_____	SARGSYAN ZARA 6505990445 _____
(ստորագրությունը)	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Digitally signed by SARGSYAN ZARA 6505990445
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=254ac3ff8b52, cn=SARGSYAN ZARA 6505990445
Date: 2021.09.27 11:42:39 +04'00'

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.09.29 17:22:04 AMST

Հավելված N 1
« » 2021թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2021/16-1-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

	Ապրանքի			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշը, ֆիրմայի անվանում	Ամբողջական անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	33141223/ 14	3B Scientific, 3B Scientific, Classic Flexible Human Spine Model with Ribs & Femur Heads, 3B Scientific	Ողնաշարի կրծքավանդակի դակով	Ողնաշարի դասական մոդել՝ կողերով և ազդոսկրերի գլխիկներով: Ճկուն մոդելը ցուցադրում է առանձին կողերի միացումը ողնաշարին և կրծոսկրին: Մոդելն ընդգրկում է՝ -ազդոսկրերի շարժական գլուխները, -ամբողջ կրծքավանդակը, - առանձին ամրացված կողերը, -ամբողջական կոնքը, -գանգի հիմը L3-L4 դիսկի պրոլապսը, -ողնուղեղային նյարդի դուրս գալը, -ողնաշարային զարկերակը, -տրամարդու կոնքը: Չափսերը՝83 սմ , Քաշը՝3.2 կգ, Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
2	33141223/ 15	3B Scientific, 3B Scientific, Classic Human Brain Model, 5 part, 3B Scientific	Գլխուղեղի դասական մոդել 5 մասից	Մարդու գլխուղեղի 5 մասից կազմված մոդելը բաժանված է սագիտալ հարթությամբ, և համապատասխանում է մարդու իրական ուղեղի կառուցվածքին: Հախ կիսագունդը կազմված է հետևյալ մասերից՝ - ճակատային և գագաթային բլթեր, - քունքային և ծոծրակային բլթեր, -ուղեղի ցողուն, -ուղեղիկ: Չափսերը՝13x14x18 սմ, Քաշը՝ 0.66 կգ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
3	33141223/ 16	3B Scientific, 3B Scientific, Human Brain Model, 8 part, 3B Scientific	Գլխուղեղի մոդել բաղ կացած 8 մասից	Մարդու գլխուղեղի 8 մասից կազմված մոդելը պետք է բաժանված լինի սագիտալ հարթությամբ, և յուրաքանչյուր կիսագունդը պետք է ներառի հանվող մասեր՝ -ճակատային և պարիետալ բլթակ -քունքային և օքսիպիտալ բլթակ -ուղեղի ցողուն -ուղեղիկ Չափսերը՝14 x 14 x 17.5 cm Քաշը՝0.84 կգ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝ գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
4	33141223/ 17	3B Scientific, 3B Scientific, Human Heart Model with Esophagus and Trachea, 2 times Life-Size, 5 part, 3B Scientific	Սրտի մոդել կեր ակրափող ով և շնչա փողով, բա ղկացած 5 մասից	Բնական չափից 2 անգամ մեծացված սրտի մոդելի նախասրտերի պատերը և սրտի առաջային պատը հանվում է, որպեսզի երևա ներքին կառուցվածքը, հանվող են նաև կերակրափողը, բրոնխների վերին մասը, վերել առրտան, սրտի առաջային պատը և նախասրտի պատերը: Մոդելը ամրացված է շարժական ձողին: Չափսերը՝32x18x18 սմ, Քաշ՝1 կգ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
5	33141223/ 18	3B Scientific, 3B Scientific, Beauchene Adult Human Skull Model, Didactic Colored Version, 22 part, 3B Scientific	Գունավոր գանգի դիդակտիկ տարբերա կ	"Գանգի մոդելը բաղկացած է 22 մասից: Գանգը կազմված է առանձին ոսկրերից, որոնք ներկված են 9 տարբեր դիդակտիկ գույներով: Գանգի մոդելը կազմված է -գագաթոսկրերից, - ծոծրակոսրից, -մաղոսկրից, -քունքոկրերից, -խոփից, -այտոսկրերից, - վերին ծնոտի ատամներից, -քմոսկրերից, քթոսկրերից, -արցունքոսկրերից, -ստորին քթային խեցուց, -ստորին ծնոտի ատամներից: Չափսերը՝21x14x16սմ, Քաշը՝0.7կգ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը

				ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝ գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
6	33141211/252	3B Scientific, 3B Scientific, Deluxe Functional Human Shoulder Joint, Physiological Movable, 3B Scientific	Ուսային հոդի ֆունկցիոնալ մոդել լյուքս դասի	Աջակողմյան հոդի ֆունկցիոնալ մոդելը համապատասխանում է բնական չափերին, առկա են կապանները: Յուցադրում է հոդի անատոմիան և հնարավոր ֆիզիոլոգիական շարժումները: Հոդամակերեսները պետք է ցուցադրված լինեն կապույտ գույնով: Հոդի մոդելը պետք է ամրացված լինի պատվանդանին: Չափսերը՝30սմ Քաշը՝0.7կգ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝ մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
7	33141211/253	3B Scientific, 3B Scientific, Functional Human Hip Joint Model with Ligaments & Marked Cartilage, 3B Scientific	Կոնքազդրային հոդի ֆուն կցիոնալ մոդել	"Աջակողմյան հոդի բարձրորակ ֆունկցիոնալ մոդելը համապատասխանում է բնական չափերին, առկա են կապանները: Յուցադրում է հոդի անատոմիան և հնարավոր ֆիզիոլոգիական շարժումները: Հոդամակերեսները ցուցադրված են կապույտ գույնով: Հոդը ամրացված է պատվանդանին: Չափսերը՝32 սմ, Քաշը՝0.74 կգ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
8	33141211/254	3B Scientific, 3B Scientific, Functional Human Knee Joint Model with Ligaments & Marked Cartilage, 3B Scientific	Ծնկան հոդի ֆուն կցիոնալ մոդել	"Աջակողմյան հոդի բարձրորակ ֆունկցիոնալ մոդելը համապատասխանում է բնական չափերին, առկա են կապանները: Յուցադրում է հոդի անատոմիան և հնարավոր ֆիզիոլոգիական շարժումները: Հոդամակերեսները ցուցադրված են կապույտ գույնով: Հոդը ամրացված է պատվանդանին: Չափսերը՝32 սմ, քաշը՝0.89 կգ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝ մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
9	33141211/255	3B Scientific, 3B Scientific, Functional Human Elbow Joint Model with Ligaments & Marked Cartilage, 3B Scientific	Արմնկային հոդի ֆուն կցիոնալ մոդել	Աջակողմյան հոդի բարձրորակ ֆունկցիոնալ մոդելը համապատասխանում է բնական չափերին, առկա են կապանները: Յուցադրում է հոդի անատոմիան և հնարավոր ֆիզիոլոգիական շարժումները: Հոդամակերեսները ցուցադրված են կապույտ գույնով: Հոդը ամրացված է պատվանդանին: Չափսերը՝33 սմ, քաշը՝0.3 կգ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝ մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
10	33141195/3	Nissin, Nissin Dental Products Inc., PRO2002-UL-HD-DM-28, Nissin	Ծնոտի ֆանտոմ 28 ատամ	Ծնոտի ֆանտոմը ունի 28 շարժական ատամներ, տիպ՝Nissin: Ֆանտոմը հնարավորություն է տալիս արտիկուլյատորը ֆիքսել , ծնոտները մաքսիմալ իրարից հեռացված դիրքում: Հնարավոր է համալրել արտիկուլյատորը մինչև 180 աստիճան առանց ֆիքսացիայի բացվելու հնարավորությամբ, նաև ծնոտներով, որոնք պատրաստված են բնականին մոտ փափուկ նյութից:Նոր չօգտագործված:
11	33141223/19	Nissin, Nissin Dental Products Inc., A5A-200 (28S), Nissin	Մնայուն ա տամների մոդելներ 28 հատ	Հավաքածուն ներկայացված է 28 ատամից՝իրենց արմատներով: : Պատրաստված են սինթետիկ նյութերից, ունեն բնական չափեր: Նախատեսված 10-րդ չափաբաժնի ծնոտի ֆանտոմի համար: Արմատի անատոմիական ֆորմա և պարզ ուղիղ արմատի դիզայն: Ատամները՝17, 16, 15, 14, 13, 12, 11, 21, 22, 23, 24, 25, 26, 27; 47, 46, 45, 44, 43, 42, 41; 31, 32, 33, 34, 35, 36, 37: Ֆորմատ՝հավաքածու/հատ: Նոր չօգտագործված:
12	33141223/20	3B Scientific, 3B Scientific, Human Female Pelvic Skeleton Model, 3B Scientific	Կնոջ կոնքի կմախքի մոդել	Կնոջ կմախքը նախատեսված է կանանց կոնքի կառուցվածքի ուսումնասիրության համար: Կոնքի կմախքը բաղկացած է ազդոսկրից , սրբոսկրով պոչուկից , 2 զույգ գոտկային ողերից , ինչպես նաև թայլային համաճոնից : Քաշ՝1.094 կգ Չափսերը՝19 x 25 x 24 սմ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
13	33141223/21	3B Scientific, 3B Scientific, Childbirth Demonstration Pelvis Skeleton Model with	Կոնքի կմախքի մոդել պտղի գանգով ծն	Մոդելը ցուցադրում է ծննդաբերության ժամանակ կոնքով պտղի գլխի առաջխաղացումը: Ծննդաբերությունը նկարագրող կոնքի վարժասարքը կազմված է թայլային համաճոնով կնոջ կոնքից, ազդոսկրից , սրբոսկրով պոչուկից , 2 զույգ գոտկային ողերից : Հոդակապումը հնարավորություն է տալիս պտղի գլխի շարժումը , վերջինս

		Fetal Skull, 3B Scientific	նաբերությ ան ցուցա դրման համար	տեղադրված է S-աձև հենակին: Քաշը՝1.6 կգ Չափսերը՝ոչ ավել քան 33 x 26 x 18 սմ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝ գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
14	33141211/256	3B Scientific, 3B Scientific, Fetus Model, 3B Scientific	Պտղի մոդել	Մոդելը միջին մեծության մարդու հասուն պտուղ է, պատրաստված փափուկ և ամուր կտորից: Պտղի մոդելը ճկուն է ցույց տալու համար ծննդաբերության ընթացքում հնարավոր բոլոր դիրքերը: Քաշը՝0.45 կգ Չափսերը՝41 x 23 x 12 սմ Մոդելը ունի 1 տարվա գործարանային երաշխիք, ինչպես նաև 1 տարվա լրացուցիչ երաշխիքի ստացման հնարավորություն՝մոդելի հետ մատակարարվող բարկոդի միջոցով ծրագրային ապահովման գրանցման միջոցով: Ծրագրային ապահովումը ներառում է անատոմիայի 23 թվային լեկցիաներ, 117 վիրտուալ անատոմիական մոդելներ և 39 հարցաշարեր՝գիտելիքների ստուգման համար: Նոր չօգտագործված:
45	33141195/4	KaVo, KaVo, KaVo Dental, KaVo	Պլաստ մասե ատամներ Kavo մոդելի համար	Պլաստմասե ատամներ (մշտական կցվածքի) ,որոնք առանց պտուտակների հատուկ վրան առկա հատվածով ֆիքսվում են kavo ֆիրմայի DPS-Model UK VZ և DPS-Model OK մոդելներին (օրիգինալ): Համատեղելի են DentSim սիմուլյացիոն համակարգի հետ: 11-րդ ատամից 500 հատ, 35-րդ ատամից 300 հատ, 37-րդ ատամից 300 հատ, 36-րդ ատամից՝100 հատ: Տուփը պարունակում է 100 հատ նույն ատամից: Արտադրող ընկերությունը ունի ISO 9001 սերտիֆիկատ: Նոր չօգտագործված

ԳՆՈՐԴ
«Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-էներգոմաշ»ՓԲԸ
Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10
Բանկ՝ «Էյչ Էս Բի ՍԻ բանկ
Հայաստան»ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝ Բ. Թադևոսյան
SARGSYAN ZARA 6505990445
Digitally signed by SARGSYAN ZARA 6505990445
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••,
serialNumber=254ac3ff8b52, cn=SARGSYAN ZARA 6505990445
Date: 2021.09.27 11:43:50 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.09.29 17:22:42 AMST

Հավելված N 2
« » 2021թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2021/16-1-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

*ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ապրանքի							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Մատակարարման		
					Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը**
1	լրակազմ	364800.00	729600.00	2	Ք.Երևան Կոնյունի 2	2	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
2	լրակազմ	184800.00	369600.00	2	Ք.Երևան Կոնյունի 2	2	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
3	լրակազմ	217800.00	871200.00	4	Ք.Երևան Կոնյունի 2	4	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
4	լրակազմ	388950.00	777900.00	2	Ք.Երևան Կոնյունի 2	2	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
5	լրակազմ	330600.00	991800.00	3	Ք.Երևան Կոնյունի 2	3	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
6	հատ	113400.00	453600.00	4	Ք.Երևան Կոնյունի 2	4	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
7	հատ	113250.00	226500.00	2	Ք.Երևան Կոնյունի 2	2	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
8	հատ	113250.00	226500.00	2	Ք.Երևան Կոնյունի 2	2	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
9	հատ	113250.00	226500.00	2	Ք.Երևան Կոնյունի 2	2	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
10	հատ	95000.00	285000.00	3	Ք.Երևան Կոնյունի 2	3	Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում

11	*լրակազմ*	*51000.00*	*255000.00*	*5*	*Ք.Երևան Կոնյունի 2*	*5*	*Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում*
12	*լրակազմ*	*61950.00*	*247800.00*	*4*	*Ք.Երևան Կոնյունի 2*	*4*	*Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում*
13	*լրակազմ*	*319500.00*	*319500.00*	*1*	*Ք.Երևան Կոնյունի 2*	*1*	*Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում*
14	*հատ*	*181950.00*	*727800.00*	*4*	*Ք.Երևան Կոնյունի 2*	*4*	*Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում*
45	*հատ*	*2670.00*	*3204000.00*	*1200*	*Ք.Երևան Կոնյունի 2*	*1200*	*Մատակարարումը 2021 թվականին՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում*

Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.09.29 17:23:05 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-էներգոմաշ»ՓԲԸ
Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10
Բանկ՝ «Էյչ Էս Բի ՍԻ բանկ Հայաստան»ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

SARGSYAN ZARA 6505990445

Digitally signed by SARGSYAN ZARA 6505990445
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••,
serialNumber=254ac3ff8b52, cn=SARGSYAN ZARA 6505990445
Date: 2021.09.27 11:45:12 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2021թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2021/16-1-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Հանրագումար
1	33141223/14	Ողնաշար կրծքային դակով										729600.00	729600.00	729600.00	729600.00
2	33141223/15	Գլխուղեղի դասական մոդել 5 մասից										369600.00	369600.00	369600.00	369600.00
3	33141223/16	Գլխուղեղի մոդել բաղ կացած 8 մասից										871200.00	871200.00	871200.00	871200.00
4	33141223/17	Սրտի մոդել կեր ակրափող ով և շնչա փողով, բա ղկացած 5 մասից										777900.00	777900.00	777900.00	777900.00
5	33141223/18	Գունավոր զանգի դիդակտիկ տարբերա կ										991800.00	991800.00	991800.00	991800.00
6	33141211/252	Ուսային հոդի ֆուն կցիոնալ մոդել լյուքս դասի										453600.00	453600.00	453600.00	453600.00
7	33141211/253	Կոնքազ դրային հոդի ֆուն կցիոնալ մոդել										226500.00	226500.00	226500.00	226500.00
8	33141211/254	Ծնկան հոդի ֆուն կցիոնալ մոդել										226500.00	226500.00	226500.00	226500.00
9	33141211/255	Արմնկային հոդի ֆուն կցիոնալ մոդել										226500.00	226500.00	226500.00	226500.00
10	33141195/3	Ծնոտի ֆանտոմ 28 ատամ										285000.00	285000.00	285000.00	285000.00
11	33141223/19	Մնայուն ա տամների մոդելներ 28 հատ										255000.00	255000.00	255000.00	255000.00
12	33141223/20	Կնոջ կոնքի կմախքի մոդել										247800.00	247800.00	247800.00	247800.00
13	33141223/21	Կոնքի կմախքի մոդել պտղի զանգով ծն նաբերությ ան ցուցա դրման համար										319500.00	319500.00	319500.00	319500.00
14	33141211/256	Պտղի մոդել										727800.00	727800.00	727800.00	727800.00

45	*33141195/ 4*	*Պլաստ մասե ատամներ Kavo մոդելի համար*										*3204000.00*	*3204000.00*	*3204000.00*	*3204000.00*

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.09.29 17:23:21 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-էներգոմաշ»ՓԲԸ
Հասցե՝ Ք.Երևան, Արզումանյան 32-10
Բանկ՝ «Էյչ Էս Բի ՍԻ բանկ
Հայաստան»ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

SARGSYAN ZARA 6505990445

Digitally signed by SARGSYAN ZARA 6505990445
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••,
serialNumber=254ac3ff8b52, cn=SARGSYAN ZARA 6505990445
Date: 2021.09.27 11:51:25 +04'00'

_____

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2021/16-1-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ***«ԷԱՃԱՊՁԲ-2021/16-1-ԵՊԲՀ-1»***
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «___»«_____» 20__թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
«ԷԱՃԱՊՁԲ-2021/16-1-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N ***«ԷԱՃԱՊՁԲ-2021/16-1-ԵՊԲՀ-1»***
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
Ստորագրություն ստորագրություն